Արձանագրություն N 3
«ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/2Շ» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «04» ապրիլի 2017թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Թամրազյանը

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ "Վահրադյանշին" ՍՊԸ-ի, "Կապավոր" ՍՊԸ-ի, "Եղեգնաձորի ՃՇՇ" ՓԲԸ-ի, "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ-ի, "Մոնտաժտրանսշին" ՍՊԸ-ի և "Ճամբարակի ՃՇՇՁ" ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չեն համապատասխանում՝ "ԳԿ Էներգոցենտր" ՍՊԸ-ի և "Բաղրամյանշին" ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը, քանի որ "ԳԿ Էներգոցենտր" ՍՊԸ-ն, որպես Լիցենզիայի առկայություն ներկայացրել է ՌԴ ք.Պերմում 22.06.2017թ.-ին տրված Վկայագիր կապիտալ շինարարության օբյեկտների անվտանգության վրա ազդող որոշ տեսակի կամ տեսակների աշխատանքի թույլտվության վերաբերյալ (N C-168-59-0625-59-220617 տրված Ասոցիացիա ինքնակարգավորվող կազմակերպություն "Պերմի Շինարարների Գիլդիա"), այն դեպքում երբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն շինարարարության իրականացումը հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն, իսկ Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների եվ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 02.06.2009թ.-ի N777 որոշմամբ հաստատված կարգի համաձայն ճանապարհաշինական և տրանսպորտային օբյեկտների շինարարության բնագավառում պահանջվում է Տրանսպորտային ոլորտի շինարարության իրականացման լիցենզիա: "Բաղրամյանշին" ԲԲԸ-ի կողմից խախտվել է հրավերով սահմանված վճարման պահանջագրի լրացման կարգը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) "Վահրադյանշին" ՍՊԸ-ի, "Կապավոր" ՍՊԸ-ի, "Եղեգնաձորի ՃՇՇ" ՓԲԸ-ի, "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ-ի, "Մոնտաժտրանսշին" ՍՊԸ-ի և "Ճամբարակի ՃՇՇՁ" ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

բ) "ԳԿ Էներգոցենտր" ՍՊԸ-ի և "Բաղրամյանշին" ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Անբավարար», քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,

գ) ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- "Գևորգյան և Ներսիսյան" ՍՊԸ -ին՝ 1-ին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով,

- "Ճամբարակի ՃՇՇՁ" ԲԲԸ -ին՝ 4-րդ չափաբաժնի մասով:

դ) առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

ե) փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ն.Մեսրոպյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ս. Թամրազյան